ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 24-Ի N 1048-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

_____ _____2021 թվականի N –Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 24-Ի N 1048-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունիսի 24-ի «Հայաստանի Հանրապետություն թուրքական ծագում ունեցող ապրանքների ներմուծման ժամանակավոր արգելքի մասին» N 1048-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը՝

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունիսի 24-ի «Հայաստանի Հանրապետություն թուրքական ծագում ունեցող ապրանքների ներմուծման ժամանակավոր արգելքի մասին» N 1048-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) 2-րդ կետի 5-րդ ենթակետից հետո լրացնել նոր 6-րդ և 7-րդ ենթակետեր՝ հետևյալ բովանդակությամբ.

6) ապրանքանիշերի հայաստանյան ներկայացուցիչների (դիլերներ, տարածորդներ, գործակալներ) կողմից ապրանքների միայն մեկ խմբաքանակի՝ մինչև 2022 թվականի հունվարի 1-ը ներմուծման վրա,

7) 3304 ապրանքային դիրքին և 3402209000, 9619008109 ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ ծածկագրերին դասվող ապրանքների՝ մեկ մատակարարման պայմանագրով նախատեսված, բայց ոչ ավել, քան 100 տոննա ծավալով խմբաքանակի՝ մինչև 2022 թվականի հունվարի 1-ը ներմուծման վրա,

2. Որոշման հավելվածով սահմանված ցանկի «ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ ծածկագիր» սյունակից հանել 3925300000, 7211140000, 7216220000, 7216321900, 7216501000, 7229200000, 73089098, 7311001100, 8481109908, 8481900000, 8483908100, 8544492000 թվերը,
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։